ԿԱՐԾԻՔ

Էսթեր Աշոտի Հակոբյանի «Ստվերային տնտեսության ծավալների գնահատումը և կրճատման մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով Ը.00.02 - «Տնտեսության, դրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Արդի պայմաններում աշխարհի երկրների մեծամասնության համար ստվերային տնտեսության հիմնախնդիրը բարդ և բազմակողմանի լուծում պահանջող հիմնահարցերից է, որն անմիջականորեն արտացոլվում է երկրի տնտեսական քաղաքականության վրա և որն այս կամ այն չափով բնորոշ է ցանկացած տիպի սոցիալական համակարգերին: Այդ պատճառով էլ հաճախ պայքարը ստվերային տնտեսության դեմ չի տալիս ցանկալի արդյունք, անկախ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից և իրականացվող միջոցառումների ինտենսիվությունից: Լինելով տնտեսության ոչ ֆորմալ հատված, այն զարգանում է տարերայնորեն, հետևաբար, վերջինիս ծավալների ավելացումը հանգեցնում է մի շարք բացասական հետևանքների, մասնավորապես. երկրի մրցունակության նվազում, բարոյական մթնոլորտի վատթարացում և սպառնալիք տնտեսության բնականոն զարգացմանը:

Վերոհիշյալ խնդիրներն առավել սրությամբ արտահայտվում են անցումային տնտեսություն ունեցող երկրներում, ինչպիսիք Հայաստանն է, իսկ վերջիններիս լուծումը պահանջում է գործուն պետական քաղաքականության մշակում: Հետևաբար, այսօր ստվերային տնտեսության հիմնախնդրի բացահայտումն ու վերջինիս ծավալների գնահատումը՝ խիստ հրատապ է Հայաստանի Հանրապետության համար, ինչը ևս մեկ անգամ փաստում է ատենախոսության հետազոտության կարևորությունն ու ընտրված թեմայի արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները.

Ատենախոսության հետազոտության նպատակն է բացահայտել երկրի ստվերային երևույթների բացասական ազդեցությունները երկրի տնտեսության զարգացման գործընթացում, ինչպես նաև մշակել ՀՀ-ում ստվերային տնտեսության ծավալների նվազեցմանն ուղղված մի շարք առաջարկություններ: Այդ նպատակի իրագործման համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ վերլուծել «ստվերային տնտեսություն» կատեգորիային առկա տեսական մոտեցումները եւ իրականացնել դրանց համեմատական վերլուծությունը,
- ✓ համակարգել ստվերային տնտեսության ծավալների որակական եւ քանակական գնահատման հիմնական մեթոդաբանական սկզբունքները,
- ✓ ուսումնասիրել ստվերային տնտեսության առաջացման նախադրյալները և դրա հետ կապված միջազգային փորձը,
- ✓ բացահայտել ստվերային տնտեսության բնույթը, տեսակները եւ ձեւերը,
- ✓ գնահատել ստվերային տնտեսության հետեւանքները սոցիալ-տնտեսական գործընթացներում,
- ✓ ուսումնասիրել ստվերային տնտեսության առանձնահատկությունները եւ դրանց դրսևորումները ՀՀ-ում,
- ✓ վերլուծել ստվերային տնտեսության պատճառները ՀՀ-ում,
- ✓ սահմանել ստվերային տնտեսության դերը եւ նշանակությունը ՀՀ-ում,
- ✓ զարգացնել ստվերային տնտեսության մակարդակի կրճատման ուղիները, ինչպես նաեւ ներկայացնել Հայաստանում նրա ծավալների նվազեցմանն ուղղված մեխանիզմների մի շարք առաջարկություններ:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են՝

1. Սահմանվում են «ստվերային տնտեսության էֆեկտների» վրա առավել մեծ ազդեցություն ունեցող գործոնները եւ առաջարկվում է գործարար միջավայրի վրա բացասական ազդեցությունը կարգավորող մոտեցում:
2. Հայաստանի Հանրապետության ստվերային տնտեսության ծավալները գնահատվում են Տանզիի մեթոդի կիրառմամբ, որը հիմնված է ազգային արժույթի պահանջարկի էկոնոմետրիկ մոդելի վրա: Հաշվարկվել է ազգային արժույթի ավելցուկային պահանջարկը, որը հաշվարկվում է որպես գնահատված դրամական պահանջարկի եւ զրոյական հարկերի դեպքում դրամական պահանջարկի միջեւ տարբերություն:
3. Հաշվարկվել է ստվերային տնտեսության հետևանքով պետական բյուջեի չստացված հարկային եկամուտների ծավալը: Կատարվել է Տանզիի եւ Գուտմանի մեթոդով ստացված ցուցանիշների համեմատական վերլուծությունը:
4. Բացահայտվում է ստվերային տնտեսության առաջացման վրա ազդող գործոնների համակարգը, ստվերային տնտեսության դեմ պայքարի նոր օրենսդրական եւ ինստիտուցիոնալ առաջարկներ են արվում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածությունան մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են ուսումնասիրության նպատակը, խնդիրները, սահմանված են աշխատանքի արդյունքների գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, տրված է հիմնախնդրի հետազոտման աստիճանն արտասահմանյան և հայրենական գրականության մեջ, աշխատանքի տեսա-

մեթոդական, տեղեկատվական հիմքերը, ինչպես նաև եզրակացությունները և առաջարկները:

Ատենախոսության առաջին՝ **«Ստվերային տնտեսություն եզրույթի տեսական հիմքերը»** գլխում ուսումնասիրվում է ստվերային տնտեսության էությունը, դիտարկվում գրականության մեջ եղած տարբեր մոտեցումներ և սահմանումներ, ինչպես նաև տրվում ստվերային հարաբերությունների դասակարգման բազմաթիվ տարբերակներ, վերլուծելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Այնուհետև հեղինակը դիտարկում է ստվերային հարաբերությունների վրա ազդող հիմնական գործոնները և նախադրյալները, կրկին, ցուցաբերելով բազմակողմանի մոտեցում և ուսումնասիրելով գրկանության մեջ առկա տարբեր համակարգեր:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ստվերային տնտեսության դեմ պայքարի Եվրոպական երկրների փորձը»** գլխում բացահայտվում և համակողմանի վերլուծվում են Եվրոպայում ստվերային տնտեսական հարաբերությունների ծագման պատճառները և դրա դեմ պայքարի մեթոդները,տրվում ստվերային տնտեսություն – ՀՆԱ հարաբերակցությունն ու մի շարք այլ կարևոր ցուցանիշներ, ինչպես նաև ստվերային տնտեսության դեմ պայքարի ուղղակի և անուղղակի մեթոդները: Հետազոտվում և բացայատվում է ստվերային տնտեսությունն ազգային հաշիվների համակարգում հաշվարկման տարբեր մեթոդաբանությամբ, բացահայտելով յուրաքանչյուր մեթոդի առանձնահատկությունները:

Ատենախոսության երրորդ՝ **«Ստվերային տնտեսության ծավալների և կրճատման մեխանիզմների գնահատումը Հայաստանի Հանրապետությունում»** գլխում հեղինակի կողմից, նախ, կատարվում է ստվերային տնտեսության ծավալների համակողմանի վերլուծություն, բացահայտվում պլանայինից շուկայական տնտեսության անցման խնդիրներն ու ստվերային տնտեսության ծագման պայմանները: Ներկայացվում են հիմնական ոլորտները, որտեղ առկա են ստվերային հարաբերություններ, տրվում դրամական ագրեգատների դինամիկան ՀՀ-ում և մի շարք այլ ցուցանիշերի գնահատականը: Այնուհետև իրականացվում է ստվերային

տնտեսության ծավալների գնահատումը, հաշվարկը և համեմատական վերլուծությունը Տանզիի և Գուտմանի մեթոդներով: Եվ վերջապես, ուսումնասիրվում և վերլուծվում են ստվերային տնտեսության ծագման հիմնական պատճառները և կրճատման մեխանիզմները, կիրառելով վերոհիշյալ մեթոդաբանությունները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Չնայած այն հանգամանքին, որ ներկայացրած աշխատանքը՝ ամբողջական և լուրջ գիտական հետազոտություն է, այն զերծ չէ նաև որոշ թերություններից: Նշենք դրանցից մի քանիսը:

- Հեղինակն աշխատանքի երկրորդ գլխում, մասնավորապես 2.1-ում, մանրամասնորեն բացահայտում և համակողմանի վերլուծում է Եվրոպայում ստվերային հարաբերությունների ծագման պատճառները, պայքարի մեթոդները: Ցանկալի կլիներ, որ հեղինակն ունենար առաջարկություն ոչ ֆորմալ զբաղվածության կարգավորման մասին, Չեխիայում գործող «Շվարց համակարգի» կամ այլ միջոցառումների ձևով:
- Աշխատանքում, ուսումնասիրելով տարբեր երկրների ստվերային տնտեսության դեմ պայքարի մեթոդները, հեղինակն անդրադարձ է կատարում Ֆիլիպիններին, ուր իրագործվում է «Պահանջիր կտրոն» ակցիան: Հետաքրքիր կլիներ ունենալ վերլուծություն կապված նմանատիպ փորձի հետ ՀՀ-ում և հասկանալ վերջինիս ներդրման և հետագայում չեղարկման պատճա-հետևանքային կապը:
- Ատենախոսը հիմնավոր կերպով անդրադառնում է որոշ Արևելաեվրոպական երկրների կողմից հարկերի ֆիքսված դրույքաչափի ներդրմանը, սոցիալական վճարումների կրճատմանը հարկերից խուսափման կանխման նպատակով, իսկ 3.2-ում հանգամանալից վերլուծում է ՀՀ-ում հարկային վճարումներ – ստվերային տնտեսություն հիմնախնդիրը: Ցանկալի կլիներ տեսնել հեղինակի կանխատեսումը ՀՀ-ում ֆիքսված հարկային դրույքաչափի ներդրման և վերջինիս ստվերային տնտեության վրա ազդեցության հետ կապված:

Եզրակացություն

Բովանդակության հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունը: Էսթեր Աշոտի Հակոբիանի ատենախոսությունը՝ լուրջ և համակողմանի հետազոտական աշխատանք է, ինչի մասին վկայում է թե ողջ հետազոտության ընթացքը, հիմնված գրականության բազմաթիվ աղբյուրների ուսումնասիրության, ինչպես նաև ստեղծված սեփական գծապատկերների վրա, թե ուսումնասիրության վերջում ներկայացված արդյունքները: Բացի դրանից, ներկայացված ատենախոսության վերլուծություններն ու եզրահանգումներն առանձնանում են իրենց հստակությամբ, գիտականությամբ, գիտական տերմինաբանության ողջ գործիքակազմի օգտագործմամբ և գեղեցիկ շարադրանքով:

Աշխատանքում օգտագործված տեսական և գործնական մոտեցումները, ինչպես նաև ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված, համոզիչ և ընդունելի են: Հետազոտության արդյունքում առաջադրված առաջարկությունների կիրառումը կարող է էական ազդեցություն ունենալ ՀՀ-ում ստվերային տնտեսության գնահատման և ծավալների կրճատման վրա:

Ներկայացված աշխատանքի ինքնուրույնությունը, գիտականությունը, ամբողջականությունն ու արժեքը, հետազոտությունում օգտագործված հարուստ տեսական և գործնական նյութերը թույլ են տալիս եզրակացնել, որ ատենախոսությունը արժանի է բարձր գնահատականի:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հիմնական պայմաններն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են վեց գիտական հրապարակումներում:

Էսթեր Աշոտի Հակոբյանի՝ **«Ստվերային տնտեսության ծավալների գնահատումը և կրճատման մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսության համար ներկայացված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, դրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ա.Ռ.Գալստյան

Ա.Ռ.Գալստյանի ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝

18 հունիսի 2020թ.